

ՊԱՅՄԱՅՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 1 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ


Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօյրս «

ԿԱՆԵՆԻԿ

Ծանոցման սոյր

20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՄՆԵ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԷ

Rédaction du journal

„Ir_vounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравунк“

ВАРНА

Գրոքոռնիք եւ չեմ տրոռիք

ՏԵՂԱՓՈՂՈՒԹԻՒՆ

ԻՐԱՆԻՆԻՐ ԽՈՐԱԳՐՈՒՄՆԵՐ ԻՐ
սեփական շէնքին մէջ փխադրելու
առթիւ յառաջիկայ շաբաթ օրուան
Թիւր չափով հրատարակուի :
Նստակի եւ հեռագրի հասցէն
նոյնը կը մնայ : Վառնայի մէջ անձամբ
խմբագրատուն այցելել ուղղութիւնը
պէտք է դիմեն քաղաքապետութեան
պարտէզին հարաւային կողմը գտնուող
մզկիթին դէմ տան վարի յարկը
Թիւ 296

ՆԵՐԿԱՆ ԱՊԱԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ

Կրօնական վարդապետութիւն-
ները միշտ ձգտած են ու կը
ձգտեն խրատել հաւատացեալ-
ները աշխարհային օրինակելի
կեանքով մը յաւիտեանականու-
թեան պատրաստութեամբ, այսինքն
այս աշխարհի կեանքը միշտ մը
ցոյց կուտան յաւիտեանական ան-
հուն երջանկութեան արժանա-
նալու, եւ նոյն իսկ աւելի առաջ
երթալով Գրիգորիանութիւնը,
այս աշխարհի թշուառութեան
մէջ պէտք է փնտռել կըսէ յա-
ւիտեանական երջանկութիւնը : »

Ընկերաբաններն ալ առանց
յաւիտեանականութեան վրայ հա-
ւատք ունենալու, կարծես հա-
մակարծիք են կրօնական այդ
վարդապետութեան, ներկային
մէջ տքնել աշխատիլ նեղու-
թիւն կրել ապագայի անդորրու-
թեան համար : Արդէն աւօրեայ
և ընկերական կեանքի փորձա-
ռութիւնն մեզ պէտք չը թողուր
վերի ճշմարտութեան համոզուե-
լու համար ընկերաբաններէն ուր
ապացոյցներ ուղելու : Ամէն օր
և ամէն վայրկեան ապացոյցը
մեր աչքին առջեւ է, անհատի
մը այսօրուան յողնութիւնը
վաղուան ապրուստը ապահովե-
լու համար է :

Այս սկզբունքը սրբափ ճիշդ է
անհատի մը համար, նոյնքան
ճիշդ է համայնքի մը կամ ազ-
գի մը համար, որովհետեւ ան-

հատներու համախմբումն է որ
համայնք կա՞ր ազգ կը կոչուի :
Հետեւ բար լաւագոյն ապագայի
մը ձգտող կամ վաղը մարդկօրէն
ապրիլ ուղղ ժողովուրդ մը ան-
հրաժեշտօրէն պարտական է ա-
մէն տքնութիւն և զոհողութիւն
յանձն առնել այսօր՝ վաղուան
համար : Այս պարտքը աւելի կը
ծանրանայ այն ժողովուրդներուն
վրայ, որոնք ներկային մէջ ի-
րենց ապագայի գոյութիւնը
ապահովող գրական բան մը ի
ձեռին չունին, ինչպէս մենք,
Հայերս :

Իրենց երէկուան զոհողու-
թիւններով ու տքնութիւններով
այսօր աշատագրուած ազգեր,
եթէ աստիճան մը իրենց ապա-
գան շտկած կը նկատուին, անոնք
ալ վերած չեն կրկին անոր մտա-
հողութեանէն, անոնք ալ պար-
տաւոր են իրենց զոհողութիւն-
ները շարունակել ժամանակի
պահանջին համապատասխան,
միշտ բարդաւած ապագայի մի
հեռանկարը իրենց նպատակա-
կէտ ընտրելով :

Ինչպէս վերը ըսինք, ապա-
գան ապահովելու համար գրա-
կան բան մը ի ձեռին չունեցող
ժողովուրդներ, ինչպէս Հայերս,
աւելի մեծ զոհողութիւններ յան-
ձն առնելու անխուսափելի հար-
կին տակ կը գտնուին :

Արդ, մասնաւորելով Հայերսու,
մեր ապագան ապահովելու մի-
ջոցները մէկէ աւելի են :

Նախ՝ մեր նորագոյն սերուն-
դին տակ զուտ ազգային դաստի-
արակութիւն մը : Այս «զուտ
ազգային» դաստիարակութեան
պէտքը աւելի կը շեշտուի մայր
երկրէն դուրս, գալթալայրերու
մէջ, ուր փոքրաթիւ հայու-
թիւնը շրջուցիչ առաւելութիւն-
ներով ու գիւրութիւններով օժ-
տուած օտար մեծամասնութիւնէ
մը շրջապատուած է : Այդ ազգա-
յին դաստիարակութեան հիմը
պէտք է ըլլայ փոքրիկներուն լաւ
ճանչցնելութիւն ընծայել ինչ որ
հայկական է և հայրենական :

Երկրորդ, մայր հայրենիքի
դասին պաշտպանութեան համար
ամէն զոհողութեան չընկրկիլ :

Որովհետեւ առանց այդ Գառի յա-
ջողութեան չէ կարելի մեր
ազգային գոյութիւնը և ապա-
գան ապահովել : Ոչ հարուստը
պէտք է ինքզինք խաբէ թէ իր
գրամին շնորհիւ պիտի կրնայ իր
զաւակները և թոռները կատա-
րելապէս հայ պահել քանի մը
տասնեակ տարիներ օտար միջո-
րտի տակ, ոչ գիտունը և ոչ
ճարտարագէտը այդ խաբուսիկ
վստահութիւնը թող ունենայ
այլ և այլ երեւակայական հա-
շիւներ ընելով : Որովհետեւ, հա-
կառակ այլասիրական սկզբունք-
ներու թուլթի վրայ ծաւալման,
քաղաքակրթեալ անուանուած
պետութիւնները և ազգերը դեռ
գարեւով հեռու են անխորա-
կանութեան ոգիէն, և կարծես
վերջին տարիներու մէջ ալ աւելի
կը շեշտուի խորականութիւնը,
այլատեսաց ազգամոլութիւնը :
Թուրքին եւ Ռուսին հանդէպ ի-
րենց հպատակ ազգերուն, բռնած
անմարդավայել ընթացքին չէ
որ ակնարկել կուզենք հոս :
գերմանական, աստործ—հունգա-
րական քաղաքակրթութեան կայսրու-
թիւնները ևս նոյն ոգին կար-
տացուցենք դէպի իրենց հպա-
տակ փոքր ժողովուրդները :

Հետեւաբար օտարութեան մէջ
Հայերս և մեզ նման ժողովուրդ-
ներ գաղապարաւոր ենք մեր
ազգային գոյութեան և ապագա-
յի ապահովութեան համար վե-
րոյշեալ երկու գլխաւոր պայ-
մանները անթերի լրացնել :
որոնց համար բացառիկ և երբե-
մըն մեծագին զոհողութիւններ
հարկաւոր են : Այս, այսօր այդ
զոհողութիւնները պէտք է ընենք
վ զը իբրեւ հայ և իբրեւ ազգ
կրնալ ապրելու համար :

Ներկան ապագային հումար :
այս կը պատուիրեն կրօնական
վարդապետութիւնները, ընկե-
րաբանները և վերջապէս օրուան
անհատական և համայնական
կեանքի ուսումնասիրութիւնը :



ՀԱՅԿԱՍՆ

Պուրկ. հետագր. գործակալութիւն

Կ. Պօլիս 10 յուլիս

Գնէլ վարդապետ (Մուշի ա-
ռաջնորդ) Տրապիզոն վար գըր-
ուածէ : Դուռը պաշտօնապէս Պատ-
րիարքարանին իմացուց թէ
Մուշի առաջնորդին դէմ ձեռք
առնուած այս միջոցին շարժա-
ւիթ տուած է սկսուած քննու-
թիւնը նամակի մը պատճառաւ
զոր արտասահմանի յեղփոխա-
կանները ուղղած են անոր հաս-
ցէին :

Ե. Խմբ.— Այս բացարձակ
սուտ մըն է : Այդ նամակը թուրք
կառավարութիւնը չի քրինած է
Գնէլ վարդապետը բանտարկելու
համար, որպէս զի սա Սասնոյ
թրքական խժգժութիւնները
մերկապարսնոց ընելու առիթ
չունենայ գոնէ ժամանակ մը,
մինչև որ մտքերը հանդարտին :

Վիէննա 10 յուլիս

Բարիգէն Բօլիքիէ Բօլեւսօմ-
սեմ լրագրին ուղղուած հեռա-
գրէ մը կը տեսնուի որ ճիշդ չէ
այն լուրը, թէ Ֆրանսա, Ռուսիա
և Անգլիա ստանձներ են Հայաս-
տանի մէջ բարենորոգումներ
մտցունելու հոգը :

Ե. Խմբ.— Ըսելէ մեր շահը
միայն 6000 զոհերը 30 և գիւ-
ղերու աւերումը եղան :

Կ. Պօլիս 11 յուլիս

Բաղէշի շուկան՝ որ կը բաղկա-
նայ միայն Հայոց խանութներէ,
առջի օր այրեցաւ : Ապրանքնե-
րը և իրեղենները որ Հայերուն
կը պատկանէին, աւարի տրուե-
ցան :

Հայոց առաջնորդարանը հե-
ռագրով անմիջական օգնութիւն
խնդրեց : Գրաքննութիւնը կար-
գիլէ լրագրի ընկերուն այս հրդեհի
մասին գրել :

Առ այժմ՝ անկարելի է հաստա-
տել թէ հրդեհը գիւղաւանական
է թէ շարագործութեան ար-

